



ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

<< 05 >> << 02 >> 2019թ.

Գ. Արտաշար

Արմավիրի մարզի Արտաշար համայնքի ղեկավարի 2018 թվականի աշխատանքային գործունեության վերաբերյալ

Հաշվետու ժողովին մասնակցում էին ավագանու անդամները, գյուղապետարանի աշխատակիցները, դպրոցի ուսուցիչներ և համայնքի բնակիչները :

Զեկույցով հանդես եկավ համայնքի ղեկավար Մ.Օհանյանը, որը ներկայացրեց 2018 թվականի ընթացքում իր կողմից կատարված աշխատանքները: Նաև նշեմ, որ 2018 թվականի ընթացքում ավագանին հրավիրել է 13 նիստ, որի ընթացքում քննարկվել են համայնքին հուզող հարցեր, որոնց վերաբերյալ ընդունված որոշումների մասին իրազեկվել է համայնքի բնակչությանը: Գյուղապետարանը ստացել է 113 շրջաբերական, ուղարկել 74 գրություն և քաղաքացիներին է տրամադրել 164 տեղեկանք:

1. Գյուղատնտեսության բնագավառ.

Գարնանը գյուղատնտեսական աշխատանքների մեկնարկի ժամանակ գյուղ է ներկրվել կառավարության կողմից հատկացված 570 պարկ ազոտական պարարտանյութ, 8700 լիտր դիզվառելանյութ և բաժանվել ըստ հողօգտագործողների ներկայացրած պահանջարկի: Ոռոգման ջրով հողօգտագործողներին ապահովելու նպատակով գյուղապետարանը իր անմիջական աջակցությունն է ցուցաբերել ՋՕԸ-ին անխափան ոռոգման ջրով հողօգտագործողներին ապահովելու համար, 2018 թվականի բերքատվությունը կազմել է միջինից բարձր: 2018 թվականի սեփական եկամուտների հավաքագրումը կազմում է 103%, բյուջեյի կատարողականը 100,7 %:

2. Կենցաղ սպասարկման բնագավառ.

2018 թվականի ընթացքում տնտեսությունների կենցաղային պայմանները բարելավելու նպատակով կատարվել է խմելու ջրի անխափան մատակարարում միջինը 18 ժամյա աշխատանքային ռեժիմով, կառուցվել է 350 գ/մ խմելու ջրագիծ, գյուղապետարանի և սանեպիդ կայանի կնքած պայմանագրի համաձայն պարբերաբար խմելու ջուրը ենթարկվել է ստուգումների: Վերակառուցվել է 780/մ փողոցային լուսավորություն և երեք փողոցներ ունեն լուսավորություն , կատարվել է ճանապարհների ավագապատում և հարթեցում 12կ/մ: Կատարվում է աղբահանության աշխատանքներ շաբաթական մեկ անգամ և համայնքում աղբի կուտակումներ չկան:

*3. Մշակույթի և սպորտի բնագավառ.*

*Համայնքուի մշակույթի տանը գործում է սպորտային խմբակ ,պարապում են 31 երեխա: Գյուղապետարանի աջակցությամբ երեխաները մասնակցել են ՀՀ առաջնությանը և հաղթելով գրավել են բարձր տեղեր,իսկ Վրաստանում մասնակցել են Կովկասի առաջնությանը և մրցումներին մասնակցելու համար գյուղապետարանը ցուցաբերել է իր անմիջական աջակցությունը հախթող երեխաներին տվել խրատուսական նվերներ; Գյուղապետարանը սերտ համագործակցում է դպրոցի հետ,կազմակերպում է միջոցառումներ և միջոցառման մասնակից երեխաներին հանձնվում է նվերներ: Կանանց միձագգային օրվա կապակցությամբ թոշակատու կանանց և հաշմանդամ կանանց համար կազմակերպվել է տոնական միջոցառում և տոնի կապակցությամբ նրանց հանձնվել է նվերներ:Տարվում են աշխատանքներ մշակույթի և սպորտի զարգացման ուղղությամբ:*

*4. Սոցիալական բնագավառ.*

*Գյուղապետարանի անմիջական ուշադրության կենտրոնում են սոցիալապես անապահով ընտանիքները,հաշմանդամները և թոշակատուները: 2018 թվականի սոցիալապես անապահով 16 ընտանիք դիմել է դրամական օգնության խնդրանքով և գյուղապետարանը չմերժելով նրանց խնդրանքը տվել է դրամական օգնություն ավագանու որոշմամբ:Գյուղապետարանի ջանքերի շնորհիվ <<Դիակոնյա>> բարեգործական կազմակերպության կողմից 31 ընտանիք ամսական մեկ փաթեթ ութ կիլոգրամ տարողությամբ սննդամթերք է ստանում,սոցիալապես անապահով 18 ընտանիք ստանում են ընտանեկան նպաստ,տարվում է աշխատանքներ բոլոր ուղղություններով գյուղի սոցիալական վիճակը բարելավելու նպատակով:*

*5.Համայնքի հիմնախնդիրները*

- 1.Խմելաջրի ցանցի նորացում*
- 2.Ճանապարհների ասֆալտապատում*
- 3.Մշակույթի տան վերանորոգում*
- 4.Մանկապարտեզի շենքի կառուցում*
- 5.Գյուղապետարանի շենքի կառուցում*
- 6.Ոռոգման ցանցի կիսախողովակների կառուցում և խորքային հորերի վերագործարկում:*

*Արտաշարի գյուղապետարանը 2018 թվականի աշխատավարձի,սոց վճարումների և այլ ծառայությունների հետ կապված պարտքեր չունի:*

*Արտաշար համայնքի բնակիչները գյուղապետ Մ.Օհանյանի գլխավորությամբ իրենց խորին երախտագիտությունն են հայտնում Արմանիրի մարզպետ Դ.Մաթևոսյանին և խնդրում են Արտաշար համայնքի հիմնախնդիրներին լուծում գտնելու և աջակցելու համար:*